600.0235.08.07.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

8 հուլիսի 2020 թվականի №235Ա
ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահի 2020 թվականի ապրիլի 30-ի № 205-ՀՆ հրամանի հիման վրա ստեղծված աշխատանքային խումբը 2020 թվականի մայիսի 4-8-ը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից առանձին սպառողներին առաքված էլեկտրաէներգիայի քանակի հնարավոր հավելագրումների փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության «Արարատ», «Աշտարակ» և «Աբովյան» էլեկտրական ցանցերում իրականացրել է մոնիթորինգ: Մասնավորապես, իրականացվել է թվով 720 սպառողների առևտրային հաշվառքի սարքի զննում և փաստացի ցուցմունքների գրանցում, որոնք համեմատվել են 2020 թվականի մայիսի 1-3-ը ժամանակահատվածում Ընկերության աշխատակիցների կողմից ցուցմունքների ֆիքսման բլանկներով գրանցված միևնույն առևտրային հաշվիչների ցուցմունքների հետ: Արդյունքում պարզվել է, որ՝

1) Ընկերության աշխատակիցների կողմից 2020 թվականի մայիսի 1-3-ը ժամանակահատվածում ցուցմունքների ֆիքսման բլանկներում գրանցված թվով 33 հաշվիչներով արձանագրված ցուցմունքներն ավելի մեծ են, քան 2020 թվականի մայիսի 4-8-ը

ժամանակահատվածում աշխատանքային խմբի կողմից նույն առևտրային հաշվիչներից կարդացված ցուցմունքները,

2) Էլեկտրաէներգիան բազմասակագնային էլեկտրոնային առևտրային հաշվիչով (այսուհետ՝ էլեկտրոնային հաշվիչ) հաշվառվող 124 սպառողների մոտ, սպառողի նախորդ հաշվարկային ամսվա (ըստ սակագների) ծախսերի (Pr) գրանցման փոխարեն 2020 թվականի մայիսի 1-3-ը ժամանակահատվածում Ընկերության աշխատակիցները գրանցել են այդ հաշվիչների ցուցմունքները,

3) թվով 35 էլեկտրոնային հաշվիչներ ցույց են տվել սխալ օր,ամիս, տարի և ժամ,

4) էլեկտրաէներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում ընդգրկված թվով 48 էլեկտրոնային հաշվիչներ չեն գրանցել նախորդ ամսվա ծախսը (Pr),

5) թվով 7 հաշվիչներ ընդհանրապես ներառված չեն եղել ցուցմունքների ֆիքսման բլանկներում, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտ և հետևաբար առանձին հաշվառման քարտ չունեն,

6) թվով 5 առևտրային հաշվիչների սեղմակաշարերի կափարիչները կնքված չեն եղել,

7) թվով 5 առևտրային հաշվառքի սարքի հոսանքի տրանսֆորմատորները կնքված չեն եղել,

8) թվով 125 առևտրային հաշվիչների վրա բացակայել են սեղմակաշարերի կափարիչները և հետևաբար նաև կնիքները,

2. Ընկերության հետ ձեռք բերված բանավոր պայմանավորվածության համաձայն մոնիթորինգ է իրականացվել «Դիլիջան» էլեկտրական ցանցում, որտեղ ընդհանուր առմամբ ընտրանքային կարգով դիտարկվել են 82 առևտրային հաշվիչներ, ինչի արդյունքում պարզվել է, որ՝

1) Ընկերության աշխատակիցների կողմից 2020 թվականի մայիսի 1-3-ը ժամանակահատվածում ցուցմունքների ֆիքսման բլանկներում գրանցված թվով 30 առևտրային հաշվիչներով արձանագրված ցուցմունքները կամ ծախսը (Pr) ավելի մեծ են եղել, քան 2020 թվականի մայիսի 4-8-ը ժամանակահատվածում աշխատանքային խմբի կողմից նույն առևտրային հաշվիչներից կարդացված ցուցմունքները,

2) թվով 17 առևտրային հաշվիչների վրա բացակայել են սեղմակաշարերի կափարիչները և հետևաբար նաև կնիքները,

3) թվով 8 էլեկտրոնային հաշվիչներ ցույց են տվել սխալ օր,ամիս, տարի և ժամ,

4) էլեկտրոնային հաշվիչներով հաշվառվող 7 սպառողների մոտ, սպառողի նախորդ հաշվարկային ամսվա (ըստ սակագների) ծախսերի (Pr) գրանցման փոխարեն 2020 թվականի մայիսի 1-3-ը ժամանակահատվածում Ընկերության աշխատակիցները գրանցել են այդ հաշվիչների ցուցմունքները:

3. Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված 2020 թվականի 1-ին եռամսյակի «Առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից կատարված վերահաշվարկների և հաշվարկված տույժերի վերաբերյալ» տեղեկատվության վերլուծության արդյունքում պարզվել է, որ Ընկերության «Սիսիան» էլեկտրական ցանցի թվով 5 սպառողների առևտրային հաշվիչների ցուցմունքների գրանցումը չի իրականացվել հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա առաջին երեք օրերի ընթացքում,

4. 2020 թվականի մայիսի 4-8-ը Ընկերությունում առանձին սպառողներին առաքված էլեկտրաէներգիայի քանակի հնարավոր հավելագրումների փաստի ուսումնասիրության նպատակով իրականացված մոնիթորինգի արդյունքում կազմված արձանագրությունը ներկայացվել է Ընկերությանը սույն թվականի մայիսի 22-ի № ԿՍ/34.4-Ղ4-3/1882-20 գրությամբ,

5. Ընկերությունը, ի պատասխան Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 22-ի № ԿՍ/34.4-Ղ4-3/1882-20 գրության, սույն թվականի հունիսի 4-ի №303-20 գրությամբ հայտնել է, որ՝

1) Ընկերության համապատասխան աշխատակիցների կողմից սպառողների էլեկտրամատակարարման դադարեցման և վերականգնման արդյունքում պարբերաբար վնասվում են հաշվիչների սեղմակաշարերը և Ընկերությունը յուրաքանչյուր տարի իրականացնում է հաշվիչների սեղմակաշարերի կափարիչների փոխարինում, սակայն 2020 թվականին հանրապետությունում առկա համաճարակով պայմանավորված կափարիչների տեղադրման աշխատանքներն անորոշ ժամկետով դադարեցված են,

2) 2016 թվականից Ընկերության ստորաբաժանումներին հանձնարարված է յուրաքանչյուր ամսվա սկզբին հաշվիչների ցուցմունքների գրառմանը զուգընթաց հայտնաբերել նաև ժամային շեղում ունեցող հաշվիչները և ծրագրավորիչների միջոցով արագ կազմակերպել դրանց ուղղումը, սակայն հաշվիչների մարտկոցների տեխնիկական վիճակից ելնելով, լարման անջատումների և վերականգնման արդյունքում որոշ հաշվիչների մոտ վերոնշյալ խնդիրը, նույնիսկ բազմակի ուղղումների արդյունքում, պարբերաբար ի հայտ է գալիս,

3) յուրաքանչյուր ամսվա առաջին երեք օրերի ընթացքում հաշվիչների ցուցմունքների գրանցումից հետո, ստուգողական ծրագրերի միջոցով, կատարվում են սպառողների նախնական ծախսերի կրկնակի ստուգում, ուղղումները կատարվում են մինչև հաշվետու ամսվա բաժանորդական բազաների ամփոփումը: Հանրապետությունում տիրող իրավիճակի հետ կապված կրկնակի ստուգումների գործընթացը լիարժեք չի իրականացվել և մայիսի 1-3-ն ընկած ժամանակահատվածում հաշվիչների ցուցմունքների ֆիքսման բլանկներում արձանագրված առևտրային հաշվիչների ծախսերի կամ ցուցմունքների անհամապատասխանությունները կուղղվեն, որոնք կարտացոլվեն մայիս հաշվետու ամսվա վճարման փաստաթղթերում,

4) «Արարատ» էլեկտրական ցանցի սպասարկման տարածքում թվով 73 սպառողների մոտ նախորդ հաշվարկային ամսվա էլեկտրաէներգիայի ծախսերի փոխարեն հաշվիչների ցուցմունքների գրանցման հետ կապված, հաշվիչներից թվով 6-ը բաժանորդական բազաներում չեն գտնվել, իսկ մնացած հաշվիչների դեպքում առկա են մարտկոցների հետ կապված տեխնիկական խնդիրներ, որոնց հետևանքով խախտվում են նաև ցուցատախտակին արտացոլված նախորդ ամսվա ծախսերը,

5) «Արարատ» էլեկտրական ցանցի սպասարկման տարածքում ցուցմունքների ֆիքսման բլանկներում չներառված 3 հաշվիչներից մեկը չի գտնվում լարման տակ, իսկ մյուս երկուսը տեղադրված են որպես ռեզերվ հաշվիչներ,

6) «Աբովյան» էլեկտրական ցանցի սպասարկման տարածքում թվով 51 սպառողների մոտ նախորդ հաշվարկային ամսվա էլեկտրաէներգիայի ծախսերի (Pr) գրանցման փոխարեն Ընկերության աշխատակիցները գրանցել են 2020 թվականի մայիսի 1-3-ը

ժամանակահատվածում առկա ցուցմունքները, քանի որ այդ հաշվիչները չեն գրանցում նախորդ հաշվարկային ամսվա էլեկտրաէներգիայի ծախսերի ցուցմունքները,

7) «Աբովյան» էլեկտրական ցանցի սպասարկման տարածքում թվով 1 հաշվիչի կցումը բաժանորդական քարտին կատարվել է սույն թվականի մայիսի 1-ին, այդ պատճառով այն չի ներառվել ցուցմունքների ֆիքսման բլանկներում,

8) «Դիլիջան» էլեկտրական ցանցի սպասարկման տարածքում թվով 7 սպառողների մոտ նախորդ հաշվարկային ամսվա էլեկտրաէներգիայի ծախսերի (Pr) գրանցման փոխարեն Ընկերության աշխատակիցները գրանցել են 2020 թվականի մայիսի 1-3-ը ժամանակահատվածում առկա ցուցմունքները, քանի որ այդ հաշվիչները չեն գրանցում նախորդ հաշվարկային ամսվա էլեկտրաէներգիայի ծախսերի ցուցմունքները,

9) «Սիսիան» էլեկտրական ցանցում թվով 5 սպառողների մոտ առևտրային հաշվիչների ցուցմունքների գրանցումը չի իրականացվել հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա առաջին երեք օրերի ընթացքում սմարթֆոնների անսարքության պատճառով,

6. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը հիմք ընդունելով՝ Հանձնաժողովը 2020 թվականի հունիսի 10-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ Կանոններ) սահմանված սպառած էլեկտրաէներգիայի քանակության հաշվառման կարգի, էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառքի սարքերի տեղակայման պայմանների և սպառված էլեկտրաէներգիայի մասին տվյալների պահպանման նպատակով առանձին հաշվառման քարտի բացման կանոնների հնարավոր խախտման փաստերի ուսումնասիրության նպատակով,

7. Վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի հունիսի 17-ի № 330-20 գրությամբ հաստատել է իր սույն թվականի մայիսի 22-ի № ԿՍ/34.4-Ղ4-3/1882-20 գրությամբ նշված պարզաբանումները, իսկ իր 2020 թվականի հուլիսի 7-ի № 329-20 գրությամբ հայտնել է, որ թվով 63 առևտրային հաշվիչների ցուցմունքների և ծախսերի անհամապատասխանությունները ամբողջությամբ վերացված են եղել 2020 թվականի

հաշվետու մայիս ամսվա բաժանորդական բազայում և նշված բաժանորդներին ծախսերի և ցուցմունքների անհամապատասխանությամբ հաշիվներ չեն ներկայացվել: Ինչ վերաբերում է 142 առևտրային հաշվիչների վրա սեղմակաշարերի կափարիչների (հետևաբար նաև կնիքների), ինչպես նաև 176 առևտրային հաշվիչների սեղմակաշարերի կափարիչների կնիքների բացակայությամբ պայմանավորված՝ Կանոնների 37-րդ կետի պահանջի խախտմանը՝ 2020 թվականի հուլիսի 7-ին կայացած հանձնաժողովի նիստում Ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ, իրացման գծով տնօրեն Դավիթ Ղազինյանի հավաստմամբ՝ այդ խախտումը ևս վերացվել է:

8. Կանոնների 2.1-րդ կետի համաձայն՝ էլեկտրամատակարարող ընկերությունը սպառողի էլեկտրական ցանցին միացման յուրաքանչյուր կետի համար սպառված էլեկտրաէներգիայի հաշվառման նպատակով Կանոններով սահմանված կարգով տեղակայում է առևտրային հաշվառքի սարք (բացառությամբ սպառողի սեփականությունը հանդիսացող 6 կՎ և բարձր լարման հոսանքի ու լարման չափիչ տրանսֆորմատորների) և սպառված էլեկտրաէներգիայի մասին տվյալների պահպանման նպատակով բացում և վարում է առանձին հաշվառման քարտ իր համարանիշով (այսուհետ՝ հաշվառման քարտ կամ քարտի համար): Հաշվառման քարտում պահպանվում են սպառողի՝ էլեկտրական ցանցին միացման կետի միացման ժամկետի, հարաչափերի, դրանց հետագա փոփոխությունների, ինչպես նաև սպառված (վերահաշվարկված) էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին ողջ տեղեկատվությունը,

9. Կանոնների 37-րդ կետի համաձայն՝ առևտրային հաշվառքի սարքերը, այդ թվում առևտրային հաշվիչների սեղմակաշարերը պետք է կնքվեն մատակարարի կողմից: Սպառողն իրավունք ունի լրացուցիչ կնքել առևտրային, իսկ մատակարարը վերստուգիչ հաշվառքի սարքերը, այդ թվում՝ հաշվիչների սեղմակաշարերը,

10. Կանոնների 41-րդ կետի համաձայն՝ սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային ամսում սպառողի առևտրային հաշվիչի գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը հաշվիչի գործակցով (հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների արտադրյալ) բազմապատկելու միջոցով: Եթե առևտրային հաշվիչն անմիջապես գրանցում է

էլեկտրաէներգիայի քանակը, որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրաէներգիայի այդ քանակը: Եթե առևտրային հաշվառքի սարքը տեղադրված է սահմանազատման կետից դուրս, ապա առևտրային հաշվառքի սարքով հաշվառված էլեկտրաէներգիայի քանակին գումարվում կամ այդ քանակից հանվում է առևտրային հաշվառքի սարքի տեղադրման և սահմանազատման կետերի միջև էլեկտրատեղակայանքներում առաջացած էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստների մեծությունը, որը հաշվարկվում է պայմանագրով սահմանված կարգով: Եթե սպառողի էլեկտրատեղակայանքներին միացված են ենթասպառողներ, ապա հաշվարկվում է միայն սպառողի բեռին համապատասխանող տեխնոլոգիական կորուստը: Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն կանոնների 12-րդ գլխի պահանջների,

11. Կանոնների 43-րդ կետի համաձայն՝ առևտրային (վերստուգիչ) հաշվիչի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա առաջին երեք օրերի ընթացքում: Սպառված էլեկտրաէներգիան բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչով (այսուհետ՝ էլեկտրոնային հաշվիչ) հաշվառելու դեպքում մատակարարը առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի փոխարեն գրանցում է ավտոմատացված ռեժիմում առևտրային հաշվիչի լուսատախտակի վրա արտածվող՝ սպառողի նախորդ հաշվարկային ամսվա ծախսը (ըստ սակագների): Այն դեպքերում, երբ առևտրային (վերստուգիչ) հաշվիչը ներառված է էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում, մատակարարը կարող է հաշվիչի գրանցված ողջ տեղեկատվությունը հավաքագրել ավտոմատացված համակարգի միջոցով: Մատակարարը պարտավոր է տարին առվազն մեկ անգամ ստուգել և ճշգրտել էլեկտրոնային առևտրային հաշվիչների ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված՝ գիշերային և ցերեկային ժամերին սպառված էլեկտրաէներգիայի քանակությունները,

12. հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝

1) Ընկերությունը խախտել է Կանոնների 37-րդ կետի պահանջը՝ թվով 142 առևտրային հաշվիչների վրա բացակայել են սեղմակաշարերի կափարիչները և հետևաբար նաև

կնիքները, ևս թվով 176 առևտրային հաշվիչների սեղմակաշարերի կափարիչները կնքված չեն եղել ,

2) Ընկերությունը խախտել է Կանոնների 41-րդ կետի պահանջը՝ Ընկերության աշխատակիցների կողմից 2020 թվականի մայիսի 1-3-ը ժամանակահատվածում ցուցմունքների ֆիքսման բլանկներում գրանցված թվով 63 հաշվիչներով արձանագրված ցուցմունքները (իսկ էլեկտրոնային հաշվիչների դեպքում՝ նաև նախորդ ամսվա ծախսերը) ավելի մեծ են եղել, քան 2020 թվականի մայիսի 4-8-ը ժամանակահատվածում աշխատանքային խմբի կողմից նույն առևտրային հաշվիչներից կարդացված ցուցմունքները,

3) Ընկերությունը խախտել է Կանոնների 43-րդ կետի պահանջը՝ էլեկտրոնային հաշվիչներով հաշվառվող 61 սպառողների մոտ, սպառողի նախորդ հաշվարկային ամսվա (ըստ սակագների) ծախսերի (Pr) գրանցման փոխարեն 2020 թվականի մայիսի 1-3-ը ժամանակահատվածում Ընկերության աշխատակիցները գրանցել են այդ հաշվիչների առկա ցուցմունքները: Թվով 48 էլեկտրոնային հաշվիչներ ներառված են եղել էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում, իրենց ցուցատախտակի վրա ունեցել են նախորդ ամսվա ծախսը ցուցադրող համապատասխան տող (Pr), սակայն չեն գրանցել նախորդ ամսվա ծախսը (Pr),

4) Թվարկված խախտումները ուղղակիորեն հանգեցրել են մի խումբ սպառողների իրավունքների խախտմանը: Ինչ վերաբերում է Ընկերության պարզաբանումներին, ապա դրանք չեն կարող դիտվել որպես թույլ տրված խախտումների օբյեկտիվ պատճառներ և ազատել վերջինիս դրանց համար կիրառվող պատասխանատվությունից, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը՝

Հանձնաժողովը որոշում է.

1. Կանոնների 37-րդ, 41-րդ և 43-րդ կետերի պահանջները խախտելու համար Ընկերությանը տուգանել՝ 10 000 000 (տասը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում ներկայացնել սույն որոշմամբ արձանագրված խախտումների բացառմանն ուղղված առաջարկություններ,

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
8 հուլիսի 2020թ.